

ՇՈՒՇԱՆԻԿ ԿՈՍՏԱՆՅԱՆ

*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի
գիտաշխատող*

ԼԻԱՆԱ ԱԶԱՏՅԱՆ

*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի
գիտաշխատող*

ՕՐԳԱՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների հաղթահարման գործընթացում մեծ տեղ է հատկացվում գյուղատնտեսական արտադրության զարգացմանը, որի կարևոր ուղղություններից է օրգանական (էկոլոգիական) գյուղատնտեսությունը:

Օրգանական գյուղատնտեսությունը համակարգ է, որը նպատակաուղղված է բարելավելու և խրախուսելու գյուղատնտեսական արտադրությունը՝ բնապահպանական, սոցիալական ու տնտեսական տեսանկյունից: Այս համակարգը հողի բարելավումը դիտարկում է որպես հիմնական առանցքային ուղղվածություն որակյալ մթերքների արտադրության գործընթացում: Ինչպես գյուղատնտեսական մթերքները, այնպես էլ սննդամթերքները օրգանական են կոչվում, եթե համապատասխանում են որոշակի չափանիշների, մասնավորապես սկսած հողի մշակումից մինչև իրացում: Օրգանական գյուղատնտեսությունը մի համակարգ է, որտեղ չեն կիրառվում թունավոր նյութեր, կայուն պեստիցիդներ և քիմիական պարարտանյութեր:

Օրգանական գյուղատնտեսության կազմակերպման մեթոդների ու միջոցառումների կիրառման դեպքում, օգտագործելով բուսական և կենդանական ծագման մնացորդներ, գոմաղբ, թռչնաղբ, կենսահումուս (տորֆ, կոմպոստ և այլն) և կատարելով կանաչ պարարտացում, իրականացնելով ճիշտ ռոտոմ և ցանքաշրջանառություն, բացառվում է էկոհամակարգերի, հողերի բերրիության և կենսաբազմազանության վրա բացասական ազդեցությունը:

Հայաստանյան շուկայում դեռևս լայն տարածում չունի օրգանական սննդամթերքը: Պատճառը նմանօրինակ արտադրանքի փոքր շուկան է, որը սակայն կարող է մեր երկրում զարգացման և ընդլայնման լուրջ հեռանկարներ ունենալ: Օրգանական սննդամթերքների արտադրությունը մեկնարկային փուլում համեմատաբար ավելի ծախսատար է, քան պարարտանյութերի վրա շեշտը դրած գյուղմթերքների արտադրությունը, սակայն, հետագայում այն դառնում է առավել կայուն, էկոլոգիապես մաքուր, նաև շահութաբեր արտադրողի համար :

Օրգանական գյուղատնտեսության և հետևաբար էկոլոգիապես մաքուր արտադրության զարգացման անհրաժեշտությունը պայմանավորված է ինչպես ներքին շուկայի պահանջներով (քանի որ բնակչության առողջության երաշխիք է հանդիսանում) այնպես էլ արտաքին շուկայում մրցունակության ապահովման գործով:

Օրգանական գյուղատնտեսության համակարգն աշխարհում ունի 30-ամյա պատմություն, արտադրված արտադրանքը դեռևս աննշան է և չի գերազանցում ընդհանուրի 1-2%-ը: Սակայն պետք է նշել, որ մի քանի զարգացած երկրներում այդ արտադրանքը հասնում է 8%-ի: Այդ երկրներում (Գերմանիա, Ավստրիա, Անգլիա, Բելգիա, ԱՄՆ և այլն) ֆերմերների միջին հողատարածքը կազմում է 40-50 հեկտար, որի շրջանակներում հնարավոր է ապահովել օրգանական երկրագործության համակարգի բոլոր միջոցառումները:

Օրգանական արտադրանքը սկիզբ է առել Գերմանիայում և կարճ ժամանակաընթացքում վերածվել է մեծ քիզմեսի: Օրգանական գյուղատնտեսությունը Գերմանիայում աճում է տարեկան 10%-ով և ըստ հավաստի տվյալների, նույնիսկ ֆինանսական ճգնաժամի պայմաններում այն ունեցել է աճման միտում:

Եվրոպայում օրգանական գյուղատնտեսությունը հատկապես 1980-ականներից հետո մեծ զարգացում ապրեց շնորհիվ սուբսիդավորման և խրախուսվում է ոչ միայն որպես գյուղատնտեսության, այլ նաև բնապահպանական հարցերի լուծման ձև, որի շնորհիվ զուգորդվում են տնտեսական և բնապահպանական շահերը, ինչն էլ իր հերթին ապահովում է երկրի տնտեսության կայուն զարգացումը:

2008թ. ապրիլի 8-ին ընդունվել է «Օրգանական գյուղատնտեսության մասին» ՀՀ օրենքը, որը կարգավորում է օրգանական գյուղատնտեսության մթերքի և հումքի արդյունավետության, պահպանման, վերամշակման, փոխադրման, իրացման, ինչպես նաև վայրի բույսերի մթերման հետ կապված հարաբերությունները, սահմանում է օրգանական գյուղատնտեսության վարման իրավական հիմքերը, սկզբունքները, արտադրանքի շրջանառությանը ներկայացվող հիմնական պահանջները, պետական աջակցության ուղղությունները և լիազոր մարմնի պարտավորությունները: Սույն օրենքը ուժի մեջ է մտել 2009թ. մայիսի 14-ից¹:

Տվյալ իրավիճակում հանրապետությունում օրգանական գյուղատնտեսության արմատավորումը պահանջում է այդ ոլորտի գծով տարածաշրջաններում հանրապետության կայուն տեղի ապահովում, որը սակայն լուրջ միջոցառումներ է պահանջում: Այդ միջոցառումների շրջանակներում հատկապես առաջնային են օրգանական գյուղատնտեսության ձևավորման և զարգացման աջակցության մեխանիզմները:

Հայաստանում օրգանական գյուղատնտեսությամբ կամ օրգանական սննդամթերքի արտադրությամբ զբաղվող կազմակերպություններին հավաստագիր է շնորհում «Էկոգրք» ընկերությունը, որը 2002թ. և 2003թ.-ից արդեն ներդրել է օրգանական գյուղատնտեսության և սննդամթերքների վերամշակման հավաստագրման ծառայություններ: Ընկերությունը հիմնադրվել է շվեյցարական EPER և SDC զարգացման աջակցությամբ և ստացել է միջազգային ճանաչման հավաստագիր DAP գերմանական կազմակերպության կողմից:

«Էկոգրք» ՍՊԸ-ն Հայաստանում օրգանական գյուղատնտեսական արտադրանքի և սննդամթերքների հավաստագրմամբ զբաղվող առաջին կազմակերպությունն է, որն առաջնորդվում է այդ ոլորտի գործընթացով ու իր ծառայություններով բացում է դռները դեպի օրգանական սննդամթերքների շուկա: Ընկերության հավաստագրման ոլորտներն են բուսաբուծությունը, անասնապահությունը, մեղվաբուծությունը, սննդի արտադրությունն ու վերամշակումը, ինչպես նաև դրանց իրացումը: Ընդհանրական առումով պետք է նշել այն իրողությունը, որ օրգանական գյուղատնտեսության զարգացումը մեր երկրում ունի իրատեսական հիմքեր, որոնցից են բնակչիմայական և բնատնտեսական հնարավորությունները, մասնագիտական ու գիտական մեծ ներուժը, ինչպես նաև մեր ֆերմերների աշխատասիրությունը:

Հայաստանում օրգանական գյուղատնտեսությունը զարգացման միտումներ ունի, և գնալով ավելի շատ հողատարածքներ են ընդգրկվում, ու դրանց համահունչ ավելանում են վերամշակող գյուղատնտեսական արտադրանքի ծավալները: Վերջին տվյալներով օրգանական գյուղատնտեսությամբ զբաղվում են հանրապետության նախալեռնային և լեռնային շրջանների 850-1000 հեկտար տարածքում, 2003թ. 70 հեկտարի փոխարեն: Այն ֆերմերները, որոնք իրենց ցանքատարածություններում կիրառել են հանքային պարարտանյութեր և ցանկություն ունեն սովորական մշակումից անցնելու օրգանական գյուղատնտեսությանը, պարտադիր պետք է անցնեն անցումային շրջան, որը կարող է տևել 2-3 տարի:

Այժմ օրգանական մթերք արտադրելու և իրացնելու հավաստագիր ունեն թվով 34 ֆերմեր, 3 մեղվապահական և 7 վերամշակող ընկերություններ: Հավաստագիր ունեն «Ծիրանի այգի» ՍՊԸ-ն, «Ծիրանամուտ» ՓԲԸ-ն անհատ ֆերմերներ, վերամշակող կազմակերպություններից՝ «Երևանի զարեջուր» ընկերությունն իր «Արևա» օրգանիկ հյութերով, «Թամարա ֆրուտի» մի շարք արտադրատեսակներ, «Միս նատուրալ»-ը «Յան» արտադրատեսակներով, «Նեկտար բոնուս» ընկերության բուսական յուղերը, եթերայուղերն ու օշարակների արտադրությունը, «ԱԲԴԱ» ընկերությունն իր «Սարի թեյ» արտադրատեսակներով, «Բիզոն» ընկերությունը մրգային բուսական թեյերով, մեղրի արտադրությամբ զբաղվող «Անուշակ» ՓԲԸ-ն և այլն: Հավաստագիրը տարին մեկ

¹ «Օրգանական գյուղատնտեսության մասին» ՀՀ օրենքը 04.2008թ.:

անգամ վերահաստատվում է¹:

Օրգանական գյուղատնտեսության զարգացումը մեծապես կախված է պետական աջակցությունից և միջազգային տարբեր կազմակերպությունների կողմից դրամաշնորհների հատկացումներից: Այդ ոլորտը ընդհանուր առմամբ լինելով հանրապետության տնտեսության իրական հատվածում և, մասնավորապես, ունենալով ագրարային համակարգում նոր արմատավորվող ուղղվածություն, դրա ձևավորումն ու հաջող կենսագործունեությունն անհնարին է առանց այդ բնագավառի համար բարենպաստ պայմաններ ապահովող տնտեսական և այլ գործուն մեխանիզմների մշակման ու դրանց կիրառման: Ջանազան ծրագրերի նպատակն է շրջակա միջավայրի պաշտպանության և սննդի անվտանգության կարևորագույն խնդիրների վերաբերյալ մարդկանց իրազեկության բարձրացումը՝ ֆերմերներին ավանդական գյուղատնտեսությունից օրգանական գյուղատնտեսության անցման մեթոդների և տեխնոլոգիաների ցուցադրման միջոցով:

Շահառուներին տրամադրվելու են բնապահպանական ուսուցումներ և առաջարկելու են կիրառել արդյունավետ տեխնոլոգիաներ, ֆերմերներին իրազեկելու են օրգանական գյուղատնտեսության վարման հիմունքներին ու տեխնոլոգիաների կիրառման մեթոդներին, իսկ ՏԻՄ-երի ղեկավարներին՝ շրջակա միջավայրի պահպանության և բնապահպանության կարևորագույն խնդիրների լուծման համար տեղական բյուջեից միջոցներ հատկացնելուն:

ԱՄՆ-ի Միջազգային զարգացման գործակալության «Ձեռնարկությունների զարգացման և շուկայի մրցունակության (Ի-Դի-Էմ-Սի)» հնգամյա ծրագիրն ուղղված է Հայաստանի բիզնես միջավայրի և փոքր ու միջին ձեռնարկատիրության զարգացմանը²:

«Ի-Դի-Էմ-Սի» ծրագրի հիմնական նպատակն է աջակցել հայաստանյան փոքր ու միջին ձեռնարկություններին՝ նպաստելով դրանց գործունեության կառավարման և մարքեթինգի հմտությունների բարելավմանը, սննդի որակի և անվտանգության բարձրացմանը, օրգանական չափորոշիչներին համապատասխանելու նախապայմանների ստեղծմանը, ինչպես նաև հնարավոր շուկաների բացահայտմանը:

2013թ. փետրվարին պտուղ-բանջարեղենի վերամշակման ոլորտի հայաստանյան 7 ձեռնարկությունների օրգանական սննդամթերք հավաստագրող «Էկոգրո» ընկերության գլխավորությամբ մասնակցեցին BIOFACH 2013-ին, որը կազմակերպվում է Գերմանիայի Նյուրնբերգ քաղաքում: Ընկերությունների մասնակցությունը ցուցահանդեսներին հնարավոր եղավ ԱՄՆ ՄՋԳ ձեռնարկությունների զարգացման ու շուկայի մրցունակության «Ի-Դի-Էմ-Սի» ծրագրի կողմից տրամադրված աջակցության և վերապատրաստումների շնորհիվ, որն ուղղված է եղել ընկերությունների արտադրանքի հավաստագրերի և օրգանական արտադրանքին համապատասխանեցմանը:

BIOFACH օրգանական արտադրանքի համաշխարհային ցուցահանդեսին առաջին անգամ ներկայացվեց «Սարի թեյ» ապրանքանիշի նոր տեսականին, նոր դիզայնով:

«Սարի թեյ» ապրանքանիշի 3 տեսակ ստացել են Եվրոպական կարգի օրգանիկ սննդի հավաստագիր, որոնք «Սարի թեյ» շուկայում արդեն հայտնի են որպես բարձրորակ բուսական թեյ արտադրող ապրանքանիշեր:

Այն վերամշակող ընկերությունները, որոնք մուտք ունեն միջազգային շուկա, հետաքրքրված են օրգանական մթերքի ձեռքբերմամբ: Այսինքն, վերամշակողը պետք է դառնա օրգանական հումքի պատվիրատու, ստեղծի իր հումքային բազան, պայմանագիր կնքի ֆերմերների հետ:

Օրգանական գյուղատնտեսությանը աջակցելու և զարգացնելու համար անհրաժեշտ է՝

- իրավաօրենսդրական հիմքի ձևավորմամբ օրգանական գյուղատնտեսության գործունեության համար բարենպաստ պայմանների ստեղծում,
- օրգանական եղանակով գործող տեղական արտադրողների շահերի պաշտպանություն,
- պետական ծրագրերում, մասնավորապես՝ ագրարային ոլորտի առաջնային ուղղություններում օրգանական գյուղատնտեսության կայուն դիրքի պահպանում և պետական աջակցության շրջանակներում՝ դրանց ներառում,

¹ Տվյալները «Էկոգրո» ՄՊԸ-ի:

² «Ի-Դի-Էմ-Սի» ԱՄՆ:

- նպատակային վարկերի կիրառմամբ օրգանական գյուղատնտեսության զարգացման խթանում,
- ագրարային ոլորտում իրականացվող վարկային ծրագրերում օրգանական գյուղատնտեսության զարգացման բաղադրիչների նախատեսում և կիրառում,
- օրգանական գյուղատնտեսության արտադրանքի իրացման երաշխավորված մեխանիզմների ստեղծում,
- միջալետական մակարդակով էկոլոգիական գյուղատնտեսության արտադրանքի արտահանման հնարավորությունների ստեղծում,
- օրգանական գյուղատնտեսության տեղեկատվական և խորհրդատվական համակարգի ձևավորում, որը կներառի ինչպես տեղական, այնպես էլ արտաքին շուկաները,
- հանրապետության, մարզերի և տարածաշրջանների կտրվածքով օրգանական գյուղատնտեսության կազմակերպման միավորների՝ մասնավորապես կոոպերացման սկզբունքով նոր կառույցների ձևավորում:

Վերջին տարիներին իրականացրած գործողությունների արդյունքում բարձրացել է մարդկանց իրազեկությունը կայուն գյուղատնտեսության և այլընտրանքային մոտեցումների մասին: Չեռք բերված տեղեկատվությունը և հմտությունները, այլընտրանքային մեթոդների կիրառումը, օրգանական հողօգտագործությամբ զբաղվելը նպաստում են գյուղաբնակների եկամուտների ավելացմանը, աղքատության կրճատմանը և շրջակա միջավայրի կայունությանը: Շահագրգիռ կազմակերպությունների հետ ֆերմերների համագործակցությունն ու արդյունավետ փոխգործակցությունը համարվում է մարդու կենսապայմանների բարելավման ու կայունությանն ուղղված ծրագրերի հաջողության երաշխիքը:

Պարզաբանման առումով նշենք, որ «Աջակցության ՀՀ Արագածոտնի մարզի գյուղական համայնքների զարգացումը» ծրագիրը 2013թ. իրականացվում է Գյուղատնտեսության աջակցության «Կանաչ արահետ» ՀԿ «ԱՄԳ» միջազգային հիմնադրամի հետ համատեղ: Սկզբնական փուլում ընտրվել են Ապարանի տարածաշրջանի 6 համայնքներ, որտեղ ծրագիրն իրականացնող կանայք զբաղվում են առանց թունաքիմիկատների օգտագործման հատապտուղների՝ հատկապես մորու արտադրությամբ: Ծրագիրը ֆինանսավորվում է ԵՄ-ի կողմից, 133.943 մլն. եվրո արժողությամբ¹:

Բացի վերոնշյալից իր հերթին կարևորվում է մեղվաբուծությունը, որը զարգանալու և արտահանվելու մեծ հեռանկարներ ունի: Այժմ պահվում է մոտ 200 հազար մեղվաբնուսանիք:

Ներկայումս եվրոպական երկրներում մեղրի պահանջարկը մեծացել է և հարցումների արդյունքում պարզվել է, որ մեղվաբուծական տնտեսությունները հնարավորություն ունեն 3-4 անգամ ավելացնելու արտադրությունը, եթե լուծվի արտահանման հարցը:

Հայկական գյուղատնտեսության առավել հեռանկարային ոլորտներից մեկը նաև կարելի է համարել չրերի արտադրությունը: Բարձրակարգ չիր արտադրելու համար նպաստում են երկրի աշխարհագրական դիրքը, տարեկան արևային օրերի քանակը, թարմ մրգերի՝ որպես հումքի, բարձր որակը և այլն: Չրի արտադրությունը իրականացվում է գրեթե բոլոր մարզերում, սակայն առաջատար են համարվում Արմավիրի և Արարատի մարզերը: Համաձայն «Չորացված մթերք արտադրանքի ասոցիացիայի» տվյալների Հայաստանում գործում են 5400 փոքր, 100 միջին և 21 խոշոր չիր արտադրողներ:

Վերջին տարիներին պետական աջակցության հետ մեկտեղ արտասահմանյան մի շարք կազմակերպություններ օգնություն են ցուցաբերում չրագործներին, քանի որ այդ ոլորտն ունի ռազմավարական կարևորագույն նշանակություն: Այսպես, 2013թ. ՓՄՁ Չակը, ԱՄՆ-ի միջազգային զարգացման գործակալության «Չեռնարկությունների զարգացման և շուկայի մրցունակության» ծրագրի (EDMG) և ՄԱԿ-ի Չարգացման ծրագրի հետ համատեղ ՀՀ մարզերում շարունակում են «Աջակցություն չիր արտադրողների զարգացմանը Հայաստանում» ծրագիրը, «Օրինակելի բիզնես մոդելի մշակում» բաղադրիչի շրջանակներում աջակցություն է ցուցաբերվել Արմավիրի, Արարատի, Տավուշի մարզերի չրագործներին էլեկտրոնային, արևային չորանցների ձեռքբերման գործում, կարևոր աշխատանքներ են տարվում նաև արտահանման ուղղությամբ: Այսպես, օրինակ,

¹ «Կանաչ արահետ» ՀԿ, «Բի- Էս-Սի» բիզնեսի աջակցման կենտրոն:

Բագրատաշենում հիմնադրվել է «Չրի հավաքման կենտրոն», որն ի վիճակի կլինի ապահովել արտահանման գործը: Արմավիրում ընթացքի մեջ է չրերի հավաքման, ընդունման, փաթեթավորման կենտրոնի ստեղծումը¹:

Այսպիսով, օրգանական գյուղատնտեսության զարգացման համար անհրաժեշտ է արագացնել հողերի խոշորացման աշխատանքները և կոոպերացիայի զարգացումը:

Մեր կարծիքով գյուղատնտեսության ոլորտում ի վերջո կոոպերատիվների ձևավորումը հնարավորություն կստեղծի համատեղ օգտագործելու արտադրության տեխնիկական միջոցները, արդյունավետ կազմակերպելու գյուղմթերքների վերամշակումն ու իրացումը, որի արդյունքում կոոպերատիվի անդամները կստանան ինչպես տնտեսական մեծ օգուտ, այնպես էլ կձգտեն իրենց տնտեսությունը հասցնել ավելի բարձր տեխնիկական ու տեխնոլոգիական մակարդակի: Կարելի է համոզված լինել, որ նաև կխթանվի ագրոշուկայի ձևավորումն ու զարգացումը, որն իր հերթին կնպաստի արտաքին շուկայի հետ հարաբերությունների կարգավորմանը, կստեղծվեն բարենպաստ պայմաններ տեղական ու արտասահմանյան գործարարների կողմից հանրապետության ագրարային ոլորտում ներդրումներ կատարելու համար: Գյուղում կստեղծվի նոր սոցիալ-տնտեսական իրավիճակ, հիմնականում կլուծվեն գյուղական բնակչության զբաղվածության հիմնախնդիրները:

Գյուղատնտեսության պետական աջակցության նախորդ տարիների վերլուծությունը վկայում է, որ անհրաժեշտ է լայնորեն օգտագործել պետական ռեսուրսները, միջազգային դոնոր կազմակերպությունների դրամաշնորհները, իսկ ներգրավված փոխառու միջոցները ուղղել գյուղացիական տնտեսություններին, կոոպերատիվներին տրամադրվելիք վարկային և այլ տիպի ֆինանսավորման հնարավորությունների ընդլայնմանը:

¹ ԳԳ ՓՍԶ - ԶԱԿ:

ՇՈՒՇԱՆԻԿ ԿՈՍՏԱՆՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի
գիտաշխատող

ԼԻԱՆԱ ԱԶԱՏՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի
գիտաշխատող

Համառոտագիր

Օրգանական գյուղատնտեսությունը համակարգ է, որը նպատակաուղղված է բարելավելու և խրախուսելու գյուղատնտեսական արտադրությունը՝ բնապահպանական, սոցիալական ու տնտեսական տեսանկյունից: Ինչպես գյուղատնտեսական մթերքները, այնպես էլ սննդամթերքները օրգանական են կոչվում, եթե համապատասխանում են որոշակի չափանիշների, մասնավորապես սկսած հողի մշակումից մինչև իրացում: Օրգանական արտադրանքը սկիզբ է առել Գերմանիայում մոտ 20 տարի առաջ, այն ժամանակին մեծ բիզնեսի է վերածվել: 2008 թ. ապրիլի 8-ին ընդունվել է օրգանական գյուղատնտեսության մասին ՀՀ օրենքը: «Էկոգլոբ» ՍՊԸ-ն Հայաստանում օրգանական գյուղատնտեսական արտադրանքի և սննդամթերքների հավաստագրմամբ զբաղվող առաջին կազմակերպությունն է: Օրգանական գյուղատնտեսությանը աջակցելու և զարգացնելու համար անհրաժեշտ է՝

- օրգանական գյուղատնտեսության արտադրանքի իրացման երաշխավորված մեխանիզմների ստեղծում,
- միջպետական մակարդակով օրգանական գյուղատնտեսության արտադրանքի արտահանման հնարավորությունների ստեղծում:

Բանալի բառեր. օրգանական գյուղատնտեսություն, էկոհամակարգ, մաքուր արտադրանք, շահառու, հավաստագիր, վերահսկում, արտահանում:

ТЕНДЕНЦИИ РАЗВИТИЯ ОРГАНИЧЕСКОГО СЕЛЬСКОГО ХОЗЯЙСТВА

ШУШАНИК КОСТЯНЯН
научный сотрудник
Института экономики
им. М. Котаняна НАН РА

ЛИАНА АЗАТЯН
научный сотрудник
Института экономики
им. М. Котаняна НАН РА

Аннотация

Органическое сельское хозяйство - это система, нацеленная на улучшение и стимулирование сельскохозяйственного производства с экологической, социальной и экономической позиций. Сельскохозяйственные и пищевые продукты относятся к категории экологически чистых (органических) продуктов, если они соответствуют определенным критериям, в частности, начиная с обработки земли до реализации продовольствия. Органическое производство зародилось около 20 лет тому назад в Германии, превратившись в то время в крупный бизнес. Закон РА .Об органическом сельском хозяйстве принят 8 апреля 2008 г. ООО „Экоглоб“ является первой компанией в Армении, получившей сертификат на лицензирование органической сельхозпродукции и продуктов питания.

Для поддержки и развития органического сельского хозяйства необходимо:

- создание механизмов гарантирования реализации продукции органического сельского хозяйства;
- создание возможностей экспорта продукции органического сельского хозяйства на межгосударственном уровне.

Ключевые слова: органическое сельское хозяйство, экосистема, чистый продукт, бенефициар, сертификат, контроль, экспорт.

TRENDS OF ORGANIC AGRICULTURE DEVELOPMENT

SHUSHANIK KOSTANYAN
Research Associate
M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences
Republic of Armenia

LIANA AZATYAN
Research Associate
M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences
Republic of Armenia

Abstract

Organic agriculture is a system that is aimed at improving and promoting agricultural production from various aspects: environmental, social and economic. Agricultural products and food items in order to be classified as organic ones need to meet specific standards/criteria, namely: starting from soil cultivation to sales of products/items. Organic production has originated in Germany since 1990s, and has been transformed into a large business. On 8th of April, 2008 the Law of the Republic of Armenia on Organic Agriculture was adopted. ECOGLOBE LTD is the first company in Armenia offering organic certification services. In order to support and develop organic agriculture it is required to:

- build/offer guaranteed schemes/mechanisms in order to promote sales of organic products;
- ensure state support in order to promote exports of organic agricultural products.

Keywords: organic agriculture, ecosystem, pure product, beneficiary, certificate, control, exports.